

ԿՐԹՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՐԱԿԱՆ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՌԱՔԵԱԼԻ ՅԱՅՏ-
ՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔԸ I—II ԴԱՐԵՐԻ
ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԱԽԱՆԴՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ.

Н. Гамолко.

(Христ. чтение февр. 1913 г.)

Իւր խորհրդաւոր բովանդակութեամբ և իւր արտա-
յայտութեան զրական ձևով Յայտնութիւնը պատկանում է
նոր Կտակարանի այն զրուածքներին, որոնց մասին ամենից
աւելի են վիճել ու վիճում: Այդ պատճառով էլ եկեղեցա-
կան աւանդութիւնը Յայտնութեան մասին շատ հետաքր-
քիր է թէ տեսականօրէն և թէ գործնականապէս: Եկեղե-
ցական աւանդութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս
դատել մի կողմից՝ թէ քրիստոնէական գիտակցութեան
մէջ Յայտնութեան բովանդակութիւնը ինչպէս իւրացուեց
ու յայտնուեց, միւս կողմից՝ ցոյց է տալիս՝ թէ ինչպէս
էին կիրարկում Յայտնութիւնը խրատների ու մխիթարու-
թեան նպատակով, ինչ նշանակութիւն էր տրւում այդ
գրքին եկեղեցական անձուկ շրջանում:

Նոր Կտակարանի գրքերի¹⁾ համեմատութեամբ Յայտ-
նութիւնը ուշ երևան դալով և ուղղուած լինելով փոքր-
ասիական եօթն եկեղեցիներին Եփեսոսը կենդրոն ունենա-
լով, պէտք է որ շատ ընդարձակ և արագ տարածութիւն
ունենար քրիստոնէաների մէջ, որին նպաստում էր նրա
խորհրդաւոր և վերացական դադանութեամբ լի բովանդա-

1) Յայտնութեան վերջնագոյն թուականը համարում ենք Դո-
մնաթիանոսի թագաւորութեան վերջը, երբ տեղի ունեցաւ Յովհան-
նէս առաքեալի աքսորը Պատմոս եկեղեցական աւանդութեան
համեմատ, որ սկիզբն է առնում ա. Իրենէոս Լիոնացուց և Կղեմենտ
Աղէքսանդրացուց:

կութիւնը՝ ուր՝ հալածուած և ճնշուած քրիստոնեաների հանդերձեալով համակուած տրամադրութիւնը որոնում և գտնում էր միսիթարութեան և բարոյական սփոփանքի աղբիւր։ Յայտնութեան զրքի յաջող ընդունելութիւն գրտնելու պատճառն էր նրա իսկ յայտնութիւն լինելու շահագրգռութիւնը, որ երկար և հաստատուն կերպով պահւում էր քրիստոնեայ նոր եկեղեցու մէջ, որպէս հրէական գերութիւնից յետոյ անխուսափելի ժառանգութիւն։ Սրան շատ էր նպաստում պատմական մօայլ շրջանը, որ լի էր ամենատեսակ ճգնաժամերով, արկածներով և վրդովմունքով։

I դար. Հռովմայ ս. Կղեմենս. — Յայտնութեան մասին եկեղեցական աւանդութիւնը սկսում է քրիստոնէական շրջանի առաջին դարից։ Օրինակներ (ցիտատ) Յայտնութիւնից — որպէս քրիստոնէական սուրբ զրքից — հանդիպում են Հռովմայ Կղեմենտի թղթի մէջ, որ առ Կորնթացիս (գլ. 3, 4)։ Այս գէպքում յիշաւի, Կղեմենտի օրինակը աներկբայ է այն ձևով ինչպէս մէջ է բերուած. «προλέγει γὰρ...»*, թէև օրինակը Յայտնութեան իբր. 12 բառական կրկնութիւնը չէ, բայց հիմնուած է Հին Կտակարանից (Ես. 40, 10. 62, 11) գաղափարական փոխառութեան վերայ։ Բայց «ἀποδοῦναι ἐλάστω» արտայայտութիւնը, որը չունի Եսային, ուղղակի Յայտնութեանն (իբր. 12) է վերաբերում։ Այդ օրինակը կարեւոր է որպէս հնագոյն վկայութիւն Յայտնութեան մասին քրիստոնէական գրականութեան մէջ¹⁾։

*) Հայերէն Աստուածաշունչ «Ահա գամ՝ վաղվաղակի՝ և վարձք իմ՝ ընդիս հատուցանելի իրաքսնչիւր ըստ գրծս խրեանց» Յայտ. գլ. իբր. 12։

Թուս. «Ահաւասիկ Տէր Աստուած գոյ զօրութեամբ և բազուկ Իւր իշխանութեամբ։ Ահա, վարձք Իւր ընդ նմա և հատուցումն նորա առաջի երեսաց նորա» (Ես. իս. 10)։ «Ահաւասիկ Տէր լսելի առնէ մինչև ի ծագս երկրի։ Ասացէք դստեր Սիօնի, գոյ Փրկիչ Քո, վարձք Իւր ընդ Իւր և հատուցումն նորա՝ առաջի նորա» (Ես. կք. 11)։

Թարգ.

1) *Stu Tiefenthal, Die Apocal. des heiligen Johannes, S. 3 u 775.*

Ս. Հերմաս. Նոյն իսկ դարում, կամ յամենայն դէպս հետեւեալ դարի առաջին տարիներում Յայտնութեան մասին վկայութիւն է տալիս առաքելականն Հերմաս, իւր «Հովիւ»-ում (գիրք I գլ. IV): Այստեղ քրիստոնէութեան հակառակ ուժը նա պատկերացնում է վիթխարի դադանի կամ աւելի ճիշտը, ծովային սոսկալի հրէշի տեսքով, որի երախից դուրս է գալիս հրեղէն մարախ: 100 ոտք բարձրութեամբ հրէշը ունի սափորանման զլուխ¹⁾: Նոյն տեսիլքի մէջ հովուին երևում է հարսի պէս զարդարուած կին (հմտ. Յայտ. իա, 2): Ընդհանրապէս Հերմասի «Հովիւ»-ի I և III գրքերը նմանութիւն ունին յայտնութեան հետ²⁾, որ բնականաբար կարելի է բացատրել, թէ հեղինակը ծանօթ է ս. Յովհաննէս Աստուածարան առաքելին³⁾: «Հովիւ»-ի հեղինակ Հերմասը շատ անգամ է նոյնանում այն Հերմասին կամ Երմին՝ որին Պօղոս առաքելալը յիշում է Հռովմայեցւոյ թղթում (16, 14): Յամենայն դէպս նա առաքելական շրջանին է պատկանում և Հռովմայ կղեմենտին ժամանակակից է:

III Եզր. Յայտնութեան գիրքը որ յայտնի է Եզրի Գ. գիրք անունով դ, 35, և շարունակութիւն, բովանդակում է այն տեսարանը, որ շատ յիշեցնում է 5-րդ կնիքի տեսիլքը (Յայտ. գ, 9—11.): Ենթադրելով, որ Եզրի Գ. պարականոն գիրքը⁴⁾ յեանազոյն ժամանակի զործ է,

1) Տես Յայտ. ժա 7, ժր. 3, 1. Ժէ. 8.

2) Տես «Пастырь» (Հովիւ) Ерма, Вид. 2, 4. հմտ. Յայտ. ժր. «Пастырь» 4, 2. հմտ. Յայտ. ժր. 21, 3. «Пастырь» 3, 2. հմտ. Յայտ. իա., 16, 19. «Пастырь» 3, 4, 5. հմտ. Յայտ. իր, 14, Ժթ, 9.

3) Bousset, Offenb. Joh. 1896. S. 13. «Пастырь»-ի էսխատոլոգիական մասն Յայտնութիւնից բոլորովին անկախ է համարում, և այստեղից արագ եզրակացութիւն է անում, թէ Յայտնութիւնը «Пастырь»-ի հեղինակի ժամանակ Հռովմում գեո յայտնի չէր:

4) Կեղծ Եզրի Յայտնութիւնը շատ հաշակուած էր հին և միջին դարի քրիստոնէայ եկեղեցում: Յոյն և լատին եկեղեցու հայրերը յաճախ յիշում են այն, որպէս կեղծ մարդարէական երկ. (տես Բառնարաս, Թուղթ 12. Իրենէոս III, 21, 2. Տերաուզիանոս, de cultu foem. 1, 3. Կղեմենտ Ազէք. Strom. 1, 22. 14 s qq. Ամբրոսիոս,

Համարեա անկասկածելի է դառնում թէ Գ. Եզրի Հեղինակը Հետեոյ է Յայտնութեան գրքին (Հմտ. Testam. XII Patr. Levi, ժը—Յայտ. և Դանիէլի եւ Հետ.):

Եթէ քրիստոնէութեան թուականի առաջին դարում Յայտնութեան գրքից, որպէս Սուրբ գրուածքի Հեղինակաւոր յիշատակարանից փոխառութեան և կիրառութեան անտարակուսելի հետքեր ենք գտնում, ուրեմն իրաւունք ունենք եզրակացնելու, որ այն շատ տարածուած էր և ընդունուած նախնական ընթերցողների շրջանում:

II դար. Սբ. Պողիկարպոս Զմիռնացի եւ Պապիաս Յերապոլսեցի.—Անցնելով II դարին, ակամայ ուշադրութիւններս դարձնում ենք առաքելական երկու անձանց վրայ, որոնք անձուկ կերպով կապուած են առաքելական շրջանին քարեկամական և աշակերտական քնքոյշ կապերով: Դրանք են

Ոսկերերան): Եզրի Գ. գրքի սլաւոնական և ռուսական թարգմանութիւնը կատարուած է լատիներէն հին բնագրից: Բացի դրանից կան թարգմանութիւններ — եթովպերէն, արաբերէն, արամերէն և ասորերէն: Մեզ հասած յունարէն բնագիրը համարուած է սկզբնաղիր: Լատիներէն օրինակը 16 գլխից է բաղկացած, որոնցից 2 առաջիններն և 2 վերջինները յետոյ են ներմուծուած: Գրքի թուականը ճշտելու համար գիտնականները ուշադրութիւն են դարձնում երեք գլխանի, 12 գլխաւոր և 8 կողմնակի թեր ունեցող արժուի մշուշապատ տեսիլքի վերայ: Գիտուններից ոմանք ի նկատի ունենալով դրքի արժէքը վերագրում են այն Ֆլավիանների թագաւորութեան ժամանակին (Վեսպասիանոս, Տիտոս, Դոմիտիանոս): Հմտ. Dillmann, Volkmar, Ewald, Corrodi, Wieseler, Renan, Schürer: Միւս գիտնականները Gutschmid, Le Hiré) համարելով գիրքը քրիստոնէական յետնագոյն խմբագրութիւն, հրէական հիմնական շարադրութիւնը վերագրում են 31 թուին Քրիստոսի ծնունդից առաջ, իսկ խմբագրութիւնը՝ Քրիստոսի 218 թուականին: Առաջինները արժուի 3 ղուխները համարում են 3 Ֆլավիանները, երկրորդները Սեպտիմոս Սեւերոսին՝ իւր կարակալա և Գեթա — երկու որդիներով: Schürer (op. cit. 643. 653) Եզրի գիրքը սակաւ ինչ յետոյ է համարում Բարուքի գրքից, որ գրուած է Երուսաղէմի սարսափելի կործանման տագաւորութեան տակ: Բարուքի մէջ զայրոյթն ու յոռետեսութիւնը աւելի է քան կեղծ Եզրի մէջ. Սուրբ քաղաքի աւերման սարսափելի տագաւորութիւնը արդէն փոքր ինչ մեղմացած է երևում ժողովրդի գիտակցութեան մէջ:

Բ. դար. Զմիւռնայի եպիսկոպոս Ս. Պողիկարպոսը եւ Յերապոլսի եպիսկոպոս Պապիանը. Յերապոլիսը Լաւոգիկէի մօտ էր: Երկուսն էլ հին եկեղեցու աւելի յարդելի հայրերի եւ գրողների թուին են պատկանում:

Որովհետեւ եկեղեցական աւանդութիւնը այդ երկուսին մե ձաւոր յարաբերութեան մէջ է դնում Յովհաննէս Աստուածաբան առաքեալի անձնաւորութեան հետ, անուանելով նրանց սիրոյ մեծ առաքեալի աշակերտներ եւ բարեկամներ, (Իրենէոս, Ad. haer. V, 33. հմտ. Եւսեբիոս Hist. Eccles. 3, 39), մեր համար կարեւոր է ինկատի առնել նրանց առնչութիւնը դէպի Յայտնութիւնը, որպէս նրանց սիրելի ուսուցչի—Յովհաննէս առաքեալի գործ:

Ս. Պողիկարպոսի նշանակութիւնը ներկայ դէպքում կրկնապատկւում է Լիոնի եպիսկոպոս Իրենէոսի հետեւալ խօսքերով. «Պողիկարպոսը ոչ միայն զաստիարակուած էր առաքեալների մօտ եւ ծանօթ էր Քրիստոսին տեսնողներից շատերի հետ, այլ նոյն իսկ առաքեալներից նշանակուած էր Ասիայի Զմիւռնա քաղաքի եպիսկոպոս»: «Մենք էլ, ասում է Ս. Իրենէոսը, տեսել ենք նրան մեր պատանեկութեան ժամանակ» (Եւսեբ. 4, 14): Ս. Պողիկարպոսի թղթում առ Փիլիպպեցիս՝ կարելի է գտնել նրա՝ առաքեալի հետ՝ մօտ ծանօթութեան հետքեր¹⁾:

Թղթի 6-րդ գլխում հանդիպում է ըստ ամենայնի որոշ դիմումն առ Յայտնութիւնն, որպէս առ աստուածային գրուածք: «Եւ արդ պէտք է ծառայենք նրան ահիւ եւ դողութեամբ ինչպէս հրամայել է նա մեզ, իսկ ձեզ՝ աւետարան քարոզող առաքեալներն ու մարգարէները, որոնք

1) Կարելի է սրան վերագրել ողջունի ձևը (հմտ. Յայտ. ա, 8), որը յետոյ շատ յաճախ է կրկնուում: 8-րդ գլխում ս. Պողիկարպոսը գրում է. «Μεγαλται οὖν γενόμεθα τῆς ὑπομονῆς αὐτοῦ» այսինքն Քրիստոսի. (հմտ. Յայտ. ա, 9). «Παντοκράτωρ եւ ὑπομονή» իւր բոլոր իսկութեամբ վերաբերում են Յայտնութեանը, որպէս իւր նախատալի, (որովհետեւ նոր կտակարանի միւս գրքերում այդ արտայայտութիւնը շատ հազիւ է պատահում) եւ Հին կտակարանի վերայ յնուած (Բ. Կորնթ. դ, 18 հմտ. Երեմ. գ, 19. Յովս. ա, 10):

դուշակել էին մեր Տիրոջ հանդերձեալը: Մարգարէներ անուամբ պէտք է ի նկատի ունենալ նոր Ուխտի մարգարէներին, որպիսին էին մի քանի զէպքերում իրանք առաքեալները (Պօղոս առաք. Հռովմ, Թ. Բ. Թեոս. Բ. ս. Յովհ. աստուածաբան Յայտնութեան մէջ), երբեմն էլ առաքեալների շրջանին մօտ անձինք (Անտիոք եկող մարգարէներ, որոնցից մէկը Ագարոս, Գործք Առ. Ժա. 27 — 28): Այս ցոյց է տալիս 1, առաքեալներից յետոյ մարգարէների զիրքը. 2, մեր յիշած տեղը համեմատելով Եփես. դ. 5, ուր խօսուում է, որ հեթանոսներին զէպի Քրիստոսի եկեղեցին կոչելու խորհուրդը չէր յայտնուած մարդկային ազդի նախկին սերունդներին, ինչպէս այժմ ս. Հոգւով յայտուած է նրա ս. առաքեալներին ու մարգարէներին¹): Այս զէպքում իրաւունք ունենք, ս. Պօղիկարպոսի յիշատակած մարգարէներ անուամբ ընդունուել նոր կտակարանի մարգարէներին և ամենից առաջ Յովհաննէս Աստուածաբանին, յետոյ և միւսներին, այդ բառի յատուկ կամ հեռաւոր նշանակութեամբ:

Զմիւռնացոց եկեղեցու թուղթը. Զմիւռնիայի եկեղեցին, իւր ներկայացուցչի մարտիրոսական վախճանից յետոյ, Թուղթ ուղարկեց «Ընդհանրական սուրբ եկեղեցու բոլոր եկեղեցիներին», խորապէս համոզուած լինելով, որ ամեն մի եկեղեցի զգայուն վերաբերմունք և սրտազին մասնակցութիւն կունենայ իրան զիպած վշտին: Թղթի բ. զլխում ասուում է. «Արհամարհեցին նրանք (այսինքն ս. Պօղիկարպոսն ու նրա բարեկամները) երկրաւոր

1) Տես նոյնպէս Գործք Առ. Ժգ. 1, ուր խօսուում է Անտիոքի մարգարէների մասին: Ա. Կորնթ. Ժա. 4 — 5, Ժգ. 9 Ժգ. 1 — 5, 27 — 31, երևում է, որ «մարգարէանալ» ոճը սովորական նշանակութեամբ ապագան դուշակելու հետ միասին նշանակում է նաև սրտազէտ լինելը Իսկ Յայտնութեան վերաբերութեամբ բոլորն էլ կը համաձայնեն, որ այն մարգարէութիւն է բառի թէ առաջին և թէ երկրորդ նշանակութեամբ. որովհետև այստեղ ապագան պատկերացնելու հետ միասին, բացուում են 7 եկեղեցիների և 7 հրեշտակների «օրտերի ներքինը»:

տանջանքները, որոնք մի ժամում փրկեցին նրանց յաւիտենական պատժից: Եւ խստագոյն տանջանքների կրակը նրանց համար զովութիւն էր, որովհետեւ նրանք իրանց աչքի առաջ ունէին յաւիտենական և անշէջ հօւրը»: Այստեղ լսում է Յայտնութեան արձագանքը (Ժդ, 9—11), ուր երրորդ հրեշտակը բարձրաձայն սպառնում է յաւիտենական հրով պատիժը գազանի բոլոր երգրպագուներին¹⁾: 7-րդ դիտում պատմում է բանսարկուի մասին, որ հալածանք է յարուցել քրիստոնեաների վերայ և տեսել է ս. Պօղիկարպին նրա համար, որ տեսել է նրան «զարդարուած անթառամ պսակով»: Այստեղ արդէն պարզ է ականարկութիւնը դէպի Յայտնութիւնը (բ, 10), ուր խօսւում է կեանքի պսակի մասին, որպէս նահատակութեան վարձատրութիւն, և առ Զմիւռնայի եկեղեցին թղթի մէջ յատկապէս, որի ներկայացուցիչն էր այն ժամանակ ս. Պօղիկարպոսը. իսկ անմիջապէս վերեւ խօսուեց դէպի բանսարկուի հալածանքի թելադրութիւնների մասին: 20-րդ գլխի Դօքսոլոգիան (փառաբանութիւն) տկամայ դիմում է Յայտնութեանը (ե. 13), և թէև Յայտնութեան εὐλογία-ի փոխանակ այստեղ μεγαλοσύνη է դրուած, բայց փառաբանութեան քառեակ թիւը և եզրակացութեան արտայայտութիւնը «εἰς αἰῶνας. Ἀμήν» խօսւում է յօգուտ Յայտնութիւնից (ե. 13), ազատ փոխառութեան²⁾:

1) Ա. Կիպրիանոս Կարթագենացին Յայտնութեան այս տեղին դիմումն անելով իւր թղթերում շատ անգամ քաջալերում էր իւր հօտին և նրան արիւնահեղ հալածանքների մէջ հրաւիրում էր դէպի համբերութիւն և տոկոնութիւն:

2) Lücke (Einleit, in Offenb. Johannes, 1832 S. 262 f.) վճռադարար հաստատում է, ս. Պօղիկարպոսի թղթերում որ ոչ առ Փիլիպպեցիս և ոչ առ Զմիւռնիայի եկեղեցին Յայտնութեան մասին ծանօթութեան կամ ականարկութեան հիմք չկայ, ի հարկէ նա չի համարձակում դեռ այս հիմամբ հերքել մեր գրքի գոյութիւնը Պօղիկարպոսի ժամանակով, սակայն argumentum e silentio-ն որպէս փաստի մասին լռութիւն՝ համարում է զօրեղ ապացոյց և պախարակում է Յայտնութեան առաքելական ծագումն ջատագովողներին, որոնք ջանք են անում և ձգտում են շահագործել ս. Պօղիկարպոսի հեղի-

Ս. Իզնասիոս Աստուածագգեաց. Իզնասիոս Աստուածագգեացի թղթերում նոյնպէս պատահում ենք Յայտնութեան վերաբերութեամբ յայտնի ակնարկների ու զիմումների: Այսպէս, առ Եփեսացիս թղթի մէջ (Ժե, 3) այնպիսի արտայայտութեան ենք հանդիպում, որ նման է Յայտնութեանը (Իա, 3): Բացի դրանից հմտ. առ Ֆիլատ. թուղթը զ. 1, Յայտ. գ. 12. հետ:

Յերապօլսի եպիսկոպոս Պապիաս: Իսկ Յերապօլսի Պապիաս եպիսկոպոսի վկայութիւնը Յայտնութեան մասին առաջին անգամ երևան է գալիս, Յայտնութեան վերայ, Կեսարիայի եպիսկոպոս Անդրէասի մեկնութեան մէջ, ուրեմն Զ. դարի առաջին քառորդում (?): Իւր մեկնութեան ներածութեան վերջում Անդրէաս եպիսկոպոսը ասում է. «Յայտնութեան աստուածաշունչ լինելու մասին կասկած չըկայ. որովհետեւ նրա արժանահաւատութիւնը վկայել են այնպիսի մարդիկ, որպիսին են Գրիգոր Աստուածաբանը, Կիւրեղը և նոյնպէս հնազոյններից Պապիասը, Իրենէոսը, Մեթոդիոսը, և Հիպպոլիտոսը»¹⁾: Մէջ բերուած վկայութիւնից դուրս է գալիս, որ Պապիասը Յայտնութիւնը համարում է աստուածաշունչ, ուրեմն ընդունում էր նրան կանոնական գիրք. և, Իրենէոսի, Պողիկարպոսի և ուրիշ վերեւ յիշուած անձանց պէս, Աւետարանիչ և Աստուածաբան առաքեալ Յովհաննէսի իսկական երկ:

Կեսարիայի եպիսկոպոս Անդրէասի վերեւ յիշուած վկայութիւնը Պապիասի մասին շատ անգամ է ենթարկուել յարձակումների և առարկութիւնների. և հակառակորդները

նակութիւնը, եթէ ոչ ուղղակի, գէթ նրա աշակերտ Լիոնի եպիսկոպոս Իրենէոսի միջոցով: Բայց ինքն Լիւկկէն համաձայնում է, որ ս. Իրենէոսի վկայութիւնը յոգուտ Յայտնութեան տրամադրում է նրա համախոհութիւնը Պողիկարպոսի հետ, որովհետեւ հակառակ դէպքում, նա չպէտք է կարողանար այնպիսի վստահութեամբ և կրտսրականօրէն յենուել իւր ուսուցչի հեղինակութեան վերայ:

1) Յայտնութեան վերայ իւր մեկնութեան առաջաբանում Կեսարիայի մի ուրիշ եպիսկոպոս Աթենան՝ սակաւ ինչ յետոյ, համարեա նոյնն է ասում:

առանձին իմն ուժով առաջ էին մղում երկու գլխաւոր հիմունքներ կամ, աւելի ճիշդ, տարակուսութեան առարկաներ. ա) Կեսարիայի եպիսկոպոս Անդրէասը Զ. դարի գրող է, և ուրեմն նրա հեղինակութիւնը որպէս պատմչի, չի կարող հաւասարուել Եւսեբիոս Կեսարացու հեղինակութեան հետ. բ) աւելի հնագոյնն ու ճշտապատումն իւր պատմական գրուածքում— Եւսեբիոս Կեսարացին ամենեւին չի յիշատակում թէ Պապիասը ծանօթ է եղել Յայտնութեան գրքին, որպէս սուրբ կանոնական գրքի¹⁾: Առաջ բերած առարկութիւններից առաջինը չի կարելի կարեւոր համարուել, որովհետեւ հիմք չկայ կարծելու, որ Անդրէաս եպիսկոպոսը ձեռքի տակ չէ ունեցել և, հետեւաբար, անձամբ չէ կարդացել Պապիասի գիրքը²⁾, այս բանում երաշխաւորում է նրա ամբողջ մեկնութիւնը, իմասնաւորի, Իրենէոսի, Մեթոդիոսի և Հիպոլոդիտոսի մասին նրա տեղեկութիւնների ստուգութիւնը: Այսպէս, պէտք է կարծել, որ նրա տեղեկութիւնները Պապիասի մասին պակաս արժանահաւատ չեն Կեսարացի Եւսեբիոսի տեղեկութիւններից:

Ինչ վերաբերում է առարկութեան երկրորդ կէտին, նրա ապացոյցների ոյժը կայանում է միայն այն բանում, որ Կեսարացի պատմիչը լռութեան է տուել այն, որի մասին խօսում են նրանից յետոյ ապրողները և նրանից սակաւ յայտնի Կեսարացի Անդրէաս և Արեթա եպիսկոպոսները: Պապիասի մասին խնդրում՝ Եւսեբիոս Կեսարացու կարեւոր և հեղինակաւոր ձայնը չհերքելով, մանաւանդ որքան գործը վերաբերում է նրա կարծիքին՝ Նոր Կտակարանի գրքերի մասին ընդհանրապէս և Յայտնութեան մասին իմասնաւորի, մենք միանգամայն Լիւկկէ-ի³⁾ Բուսսետի (op. cit. S. 12). և Կիրխհոֆերի⁴⁾ հետ հակում ենք

1) Hist. Eccles. III, 39.

2) Bousset (Einleit. in Offend. Joh. S. 12 Anmerk.) կասկածում էր, որ Պապիասը գրած իրնի Յայտնութեան մեկնութիւնը,

3) Lücke, Einleit. S. 265 f.

4) Patrol. Migne. t. XXXIII. Geschichte des Neutestam. Canons bis auf Hieronymus. Joh. Kirchhofer. Zür. 1842. s. 296.

կարծելու, որ Կեսարացի պատմչի լռութիւնը «argumentum e silentio», ներկայ դէպքում չի կարող վճռական նշանակութիւն ունենալ: Մի կողմից՝ անկասկած է, որ յիշելով Պապիասի երկը «λογίων» «καριακὸν ἐξηγήσεις», Կեսարացի պատմարանը ոչ մի տեղ չի խօսում նրա վկայութեան մասին յօդուտ Յայտնութեան դրքի աստուածաշունչ լինելու, բայց միւս կողմից չի կարելի կարծել, որ Անդրէաս Կեսարացուն յայտնի չէր այն դրուածքը, որը չգիտէր Կեսարացի պատմարանը, որովհետեւ վերջինիս վկայութեամբ (Hist. Eccles. III, 39) Իրենէոսը արդէն գիտէր միայն Պապիասի վերեւ յիշուած մի դրուածքը, այսպէս ծագում է հարց. կամ Եւսեբիոսը նկատել է այն՝ ինչ որ կար Պապիասի դրուածքի մէջ, կամ Անդրէաս եպիսկոպոսը կարդացել է այն, ինչ որ չկար այնտեղ: Այս հարցի առաջին կէտի պաշտպանները առանձին իմն շեշտով ընդգծում են Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան այն տեղը, ուր խօսւում է Պապիասի այն դործունէութեան մասին, որ վերաբերում է Փրկչի առականոր խօսքերի, և առաքելական պատմութիւնից չափազանցեցրած պատումների հաւաքմանը, որոնք, որպէս թէ բերանացի աւանդութեամբ հասել էին մինչև նա:

Պապիասին անուանելով ոչ հանճարեղ մարդ՝ Եւսեբիոսը աւելացնում է, որ նա իւր Քիլիազմը*) հիւսեց, հաւանօրէն, առաքելական պատումներից, կոպիտ և զգայական կերպով մեկնելով այն՝ ինչ որ այնտեղ ասուած էր յատկորոշ այլաբանութեամբ կամ փոխաբերաբար:

Բայց, եթէ մինչև անգամ թոյլ տանք, որ Պապիասի Քիլիազմի գլխաւոր աղբիւրը Եւսեբիոսը համարում է բե-

*) Քիլիազմ, առաջ է եկել յոյն chiliol-հազար բառից: Քիլիազմը, Քրիստոսի ծննդից յետոյ II և III դարի մի աղանդ էր, որ համարում էր թէ Փրկիչը իւր երկրորդ դալստեանը կը հաստատի ժամանակաւոր թագաւորութիւն, որը 1000 տարի պէտք է տևի: Այդ աղանդը յենւում էր Յայտնութեան Ի գլխի վերայ և դրա համար էլ բացատրւում էր թէ այս հազարամեակում յաւիտենական երջանկութեան ակնկալութեան հաւատարիմները պիտք է երջանկանան: Թարգ.

րանացի մի աւանդութիւն, ուրեմն ոչ մի տեղից էլ չի կարելի հետեցնել, թէ սրան պէտք է վերագրել և «τάς αποστολικὰς διηγήσεις», որոնք թերևս գրուած գրուած էին Եւսեբիոսի առաջը: Եթէ կանգնենք այս հայեցակէտի վերայ, այն ժամանակ ոչ մի արդեւք չի լինի ընդունելու, որ Պապիասը իւր Քիլիազմը վեր է առել ինչպէս բերանացի աւանդութիւնից նոյնպէս և առաքելական գրուած պատմութիւններից, որոնց մէջ առաջին տեղում պէտք է դնել ի հարկէ Յայտնութիւնը¹⁾:

Կեսարացի պատմչի լռութիւնը Պապիասի Քիլիազմի Յայտնութիւնից առնուած լինելու համար բաւական յայտնի է, այն նախահոգութեամբ, որով Կեսարացի Եւսեբիոսը վերաբերում է II—III դարի քիլիաստական ուսմունքին՝ ընդհանրապէս և Պապիասի քիլիազմին՝ ի մասնաւորի: Եւսեբիոսի խիստ և անբարեացակամ վերաբերմունքը դէպի Պապիասը վկայում է, որ Կեսարացի պատմաբանը շատ էլ բարեհաճ չէր դէպի Յերապօլսի եպիսկոպոսը և նրա շարադրութեան վերայ նայում էր անբարեացակամօրէն: Սրանից հետևում է, որ Եւսեբիոսը կարող էր նայել կամ, աւելի ուղիղ, թողնել առանց ուշադրութեան Պապիասի վերև յիշուած երկի մէջ նրա ակնարկներն ու ցուցմունքները Յայտնութեան վերայ: Այս հնարաւոր է մանաւանդ, որ իւր ժամանակի սովորութեամբ, Պապիասը, հաւանօրէն, օգտուել է աւելի Յայտնութեան մտքից քան բառերից, ջանք չանելով օրինակներ բերել Յայտնութեան գրքից և յաճախ գործադրելով բնադրին, աւել պակաս, նման դարձուածներ և փոխ առնելով գաղափարներ:

Անդրէաս Կեսարացին կարգացած լինելով Պապիասի

1) Bousset (op. cit. S. 12). պնդում է, որ ըստ Եւսեբիոսի, Պապիասը իւր Քիլիազմը առել է բերանացի աւանդութիւնից, և ոչ թէ Տիրոջ փառքի մասին՝ նրա աշակերտների գրաւոր պատմութեաներից, որ՝ Անդրէասի մեկնութեան արժանահաւատութիւնը իրաւունք չի տալիս մտածել և հաստատել թէ Պապիասը որպէս թէ ընդունում էր Յայտնութեան կանոնական և առաքելական հեղինակութիւնը:

նոյն երկը, բայց բոլորովին այլ կերպ վերաբերուելով դէպի հեղինակի անձնաւորութիւնը, հեշտութեամբ կարող էր ուշ դարձնել այն ամենի վերայ, ինչ որ այլ դէպքերում կարող էր վրիպել նոյնպէս շրջահայեաց և անկողմնապահ պատմադրի հայեացքից: Անդրէաս Կեսարացու համար բաւական էր վերահաստատել այն փաստը, թէ Պապիաս Յայտնութիւնից (ի, 2—6) է վեր առել քիլիաստիական ուսմունքը. որպէս զի այս տեղից, իւր ժամանակի սովորութեան համեմատ, միւս եզրակացութիւնը անի, թէ Պապիասը Յայտնութիւնը ոչ միայն ընդհանրապէս ընդունում էր հեղինակաւոր, այլ և աստուածաշունչ և առաքելական գիրք: Աւելի հաւանական է, որ այսպիսի եզրակացութեան համար մեծ ազդեցութիւն է ունեցել Իրենէոս Լիոնացու վճռական ծանուցումն¹⁾, թէ Պապիասը Յովհաննէս առաքելի ունկնդիրներից էր: Անկասկած Կեսարացի Անդրէասն ու Արեթան մտածում էին, — Պապիասը Յայտնութիւնից, որպէս սուրբ և հեղինակաւոր գրքից, օգտուած չէր լինի, եթէ չընդունէր այն իւր ուսուցչի իսկական գործ:

Վերև յիշուած հայեցակէտով դիւրութեամբ բնականաբար հեռացւում է Կեսարացի պատմադրի և Անդրէաս ու Արեթա Կեսարացիների հակասութիւնը: Անդրէաս Կեսարացին իւր մեկնութեան մէջ յիշում է Պապիասի միակ շարադրութիւնը (հմտ. Euseb. Hist. Eccles. III, 39), որ վերջինս բաւական պարզ դիմումն է անում Յայտնութեանը ժր, 7—9: Յիշուած շարադրութեան մէջ Պապիասը խօսում է այն միասիայի մասին, որ Տէրը տուել է հրեշտակներին:

1) Ըստ Իրենէոսի (Adv. haer. V, 33) Պապիասը շատ շօշափելի է ներկայացնում իրան Քրիստոսի հազարամեայ թաղաւորութիւնը հաւատացեալների հետ: — Այգիներն ու ցորենի արտերը այն ժամանակ շատ պտուղ կրտան, բոլոր կենդանիները ընտանի և մարդուն հնազանդ կը դառնան: Եւսերիոս Կեսարացին իւր «Եկեղեցական պատմութեան» (III, 39) մէջ ասում է, որ Պապիասը շատ եկեղեցական ուսուցիչների քիլիազմին հետևող լինելու պատճառ դարձաւ, ուսուցիչների, որոնք յենւում էին նրա հեղինակութեան վերայ:

այն է, հսկել և ղեկավարել երկրաւոր կարգերը, յետոյ նրանց անկումն՝ ի շարն զործադրած լինելով իրանց իրաւունքը, վերջապէս այս ընկած և շար հրեշտակների խիստ պատերազմը Միքայէլի և նրա հրեշտակների հետ, իսկ այս պատերազմը իսկապէս Քրիստոսի դէմ էր և Յայտնութեան դրամայի յատուկ նիւթը: Կեսարացի Անդրէասը Պապիասի շարադրութիւնից յայտնում է միայն սկիզբն ու վախճանը, բայց այս էլ բաւական է հաստատելու, որ Պապիասին յայտնի էր Յայտ. ժր. 7—9 երկնային տեսարանը, և հետեաբար նա յարգում էր Յայտնութիւնը ու միշտ օգտւում էր նրանից իւր «λογίων χωριστὼν ἐξηγήσεις» ում, որպէս աստուածային գրքի վկայութիւն (μαρτυρία), Այս փաստը մեր համար առանձին նշանակութիւն ունի, որովհետեւ, առաջին, Պապիասը ծննդեամբ այնտեղացի (Ասիա) էր, որին սկզբից ուղղուած էր Յայտնութիւնը (1, 4, 11) և ուր, հետեաբար ընթերցողների անձուկ շրջանում պէտք է պահպանուէին ամենաթարմ և մաքուր յիշողութիւններ նրա մասին. երկրորդ, Պապիասը կարող էր Յայտնութեան գրքի հեղինակի կրտսեր ժամանակակիցը և առաքելական շրջանի հետ մօտ յարաբերութեան մէջ լինել:

Պապիասի վկայութիւնը ուղիղ գնահատելու համար մնում է դեռ ճշտել նրա անձնական յարաբերութիւնը առաքելական շրջանի հետ: Իրենէոս Լիոնացին (Adv. haer. V, 33) Պապիասին, որպէս Յովհաննէս աստուածաբան առաքելի անմիջական աշակերտի՝ համարում է արժանահաւատ վկայ: Իրենէոսի վկայութեան ապացուցական ոյժը չի թուլանում նոյն ինքն Պապիասի յայտնելովը՝ թէ ինքն իրան—առաքելին¹⁾, չէ լսել չէ տեսել, այլ աւանդում է

1) Եթէ հաւատանք Եւսեբիոս Կեսարացուն, այն ժամանակ Պապիասի իսկ խօսքերով դուրս է գալիս, որ նա ոչ մի կերպով չէր կարող «αχροατής και αὐτόπτης» լինել ս. առաքելներին (H. Eccl. III, 39): Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նա չէր կարող տեսնել ու լսել բոլոր առաքելներին, բայց շատ հաւանական է, որ նա տեսել և լսել էր Յովհաննէս առաքելին: Հաւատի ճշմարտութիւնը ուսանելը նրանցից, որոնք հետեւել էին առաքելներին և անձամբ

միայն այն՝ ինչ որ ճշգրիտ գիտէր և հաւատարմութեամբ պահպանել էր երէցներին, որպէս արժանահաւատ ճշմարտութիւն, որը նա հաճութեամբ լուսարանում ու խօսակցում էր նրանց հետ, ով ուսուցանում ու աւանդում է ճշմարտութիւնը անմոռաց յիշողութեամբ: «Եթէ ես, ասում է Պապիասը իւր մասին, հանդիպում էի մէկին, որ հետեւել էր երէցներին, հարցնում էի նրան՝ նրանց խօսացածներին մասին, թէ ինչ են խօսել Անդրէասը և ինչ Պետրոսը, կամ ինչ են խօսել Փիլիպպոսն ու Թովմասը, Յակովբոսն ու Յովհաննէսը, կամ Մատթէոսը, կամ Տիրոջ աշակերտներին մէկը, ինչ է խօսել Արիստօնը կամ Տիրոջ աշակերտ երէց Յովհաննէսը»:

Իւր մասին Պապիասը ինքն իսկ խոստովանում է, թէ ինքն ժողովող է միայն. մեր ուշքը գրաւում են ինքն ըստ ինքեան երկու կէտ. առաջին, ի՞նչ մտքով պէտք է հասկանանք «երէցներին» խօսքը, որոնց վերայ մատնանիշ է լինում Պապիասը, որպէս հաւատի ճշմարտութեան իւր ուսման աղբիւր, երկրորդ, ինչո՞ւ Տիրոջ աշակերտներին անունը թուելիս՝ Յովհաննէսի անունը երկու անգամ է յիշում:

«Երէց» (πρεσβύτερος) բառի նշանակութեան ու իմաստի մասին կասկած չէ կարող լինել. այդ խօսքը այստեղ, ինչպէս Պապիասն է գործածում, նոյնպէս Իգնատիոս Աստուածադպեացի¹⁾ կիրարկութեամբ, է «առաքեալ» բառի փոխարեութիւնը²⁾. Եթէ երէց ասելով պէտք է հասկանանք առաքեալ, որոնց վարդապետութեան մասին Պապիասը

ծանօթ էին նրանց՝ Յովհաննէս առաքեալին անմիջապէս հրահանգում լինելուն չի հերքում:

1) Տես Թուղթ առ եկեղեցին Փիլադելիեայ, գլ. 5. Թուղթ առ Տրալլիացիս գլ. 2, 3.

2) Հմտ. I Պետրոս ե, 1. II և III Յովհ. Յայտն. դ, 4 և այլն. Ես. իդ, 23. այս բառի ընդհանուր գործածութիւնից բացառութիւն է կազմում Յովհ. աւետ. ք, 9. Յովհ. աւետ. ցոյց տուած տեղը կնոջ դէպքն է, որ Զոհրապեանի Աստուածաշնչի մէջ Յովհ. աւետարանի վերջն է դրուած. և երէց, գործածուած է առաջին, աւագ բառի մտքով. Թարգ.

տեղեկութիւն էր տաւանում նրանց մերձաւոր հետեւողներին, ուրեմն Արիստոնի ու Յովհաննէս երէցի հետ նա, յամենայն դէպս կարող էր ծանօթ լինել անմիջապէս, որը նկատելի է նոյն տեղի «εἶπεν» և «λέγουσαν» ժամանակների տարբերութեամբ. իսկ Յովհաննէսին երկու անգամ յիշատակելուց պէտք է եղրակացնել, որ թէև Պապիասը անձամբ ծանօթ էր ս. Յովհաննէս առաքեալին, բայց այդ ծանօթութիւնը այնքան սերտ ու երկարատեւ չէր, որ Յովհաննէսից ուսած լինելը անտարակուսելի դարձնէր: Սակայն եւսերիոս Կեսարացին այլ կերպ է մտածում (Hist. Eccles. III, 39): Յովհաննէսի անունը երկու անգամ յիշելու վերայ հիմնուելով, նա պնդում է, որ Պապիասը վերեւ յիշուած բառերում տարբերում է երկու Յովհաննէսներին, առաքեալների կարգում նա Յովհաննէս առաքեալ Աւետարանչին է անուանում, իսկ այնուհետեւ առանձին ոմն Յովհաննէս երէցի, և հասկացնում է, որ վերջինիս նա լսել է անմիջապէս, իսկ առաքեալներին՝ նրանց մերձաւոր աշակերտների ու հետեւողների միջոցով: Հեղինակաւոր պատմչի ամփոփոյ կարծիքը սկսել է տարածուել, շնայելով իւր յողորդ և բռնադրօսիկ լինելուն: Բացի Պապիասի հատուածի բնադրից, որ մէջ է բերուած Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան մէջ յօդուտ Կեսարացի պատմչի ենթադրութեան մի որոշ աստիճան խօսում է Եփեսոսում գտնուող երկու, այն է Յովհաննէս առաքեալի և Յովհաննէս երէցի գերեզմանների առեղծուածային փաստը:

Դժուար չէ համոզուել, թէ ինչպիսի խախուտ հիմքի վերայ է հանդչում Կեսարացի պատմչի կարծիքը:

Ամենից առաջ պէտք է նկատել որ Պապիասի հատուածի իսկական բնագիրը, որ գտնուում է Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան մէջ (III, 39) իրաւունք չի տալիս մեզ այդպիսի տրամաբանական եղրակացութիւն անել: Պապիասը բոլոր առաքեալներին է ընդհանրապէս երէցներ կոչում և այնուհետեւ առանձին՝ Յովհաննէսին: Եթէ այստեղ այլ անձն ի նկատ առնուած լինէր, այն ժամանակ հարկ

կը լինէր որոշ և յանուանէ կոչել¹⁾։

Ս. Պօղիկարպոսի աշակերտ Իրենէոս Լիօնացու վերև յիշուած վկայութիւնը (Adv. haer. V, 33) որպէս ըստ ամենայնի արժանահաւատ և բաց յայսմանէ, այս խնդրում լաւատեղեակ անձի, ներկայ դէպքում պէտք է ունենայ աւելի վճռական նշանակութիւն քան կեսարացի պատմչի կարծիքը, որ այս մասին դատում է բացառապէս Պապիասի շարադրութեան վերայ հիմնուած, որ իւր առջևն էր։

Ինքն Պապիսը իւր շարադրութեան մէջ այսպէս է խօսում «και τουτο ο πρεσβύτερος ελεγε», առանց անուն աւելացնելու։ Այս դէպքում «πρεσβύτερος» վկայութիւնը հաստատարողոր է յատուկ անուան։ Պապիասը, հակառակ մտքի պարզութեանը, չէր կարող բացի Յովհաննէս առաքեալից²⁾ սովորական «պաշտօնական» երէցի մասին այդպէս խօսել, որպէս անձնաւորութեան, որ այս անուամբ յայտնի եղած էր եկեղեցական ընդարձակ շրջանում։

Թարգ. Յուսիկ արեւապս.

1) Lücke (Einleit. 1832. S. 273). Եւսերիոսի՝ Պապիասի շարադրութիւնից առած հատուածի իսկական մտքի վերայ հիմնուած պնդում է, որ Պապիաս «των πρεσβυτερων» յատկացնում է առաւելապէս առաքեալների կատեգորիային և միևնոյն ժամանակ անկասկած տարբերում է նրանցից Արիստօնին և պրեսբիտեր (երէց) Յովհաննէսին։ «Ο πρεσβύτερος»-ը կցելով վերջինին 0 նշանակում է պաշտօնական պրեսբիտեր — երէց, տարբերելով առաքեալ պրեսբիտէր — երէցից։

2) Տե՛ս Բ և Գ Յովհ. թղթերը։